

ՖաՖա *ալեյքսիսթե*, յազգասուսիս ալծանդոտիս լաճմՄերլոճոճ, յեճա լաճ մՄերլոճոճ, տճ. 2003. 224 ճճ.

ՃԱ.ՃԱ Ա.Լ.Ե.Մ.Ի.ՃԵ. Կոճկասյան Աղճանքի գրչուճյունը, Լեճուն և դարուճյունը, Թրիլիսի, 2003, 224 էլ:

Կոճկասի էՄնիկական, ճաղաճական ու գրական-մշակուճյալիս պատմուճյանը ուճոյնիսկ թճթևակի ծանոթուճյուն ուճնցող մեկն աուանց դճճարուճյան կարող է կուճճել, թճ իճնչ կարևորուճյան ու ծավալի իճնդիրնեը է արծարծուճմ այս խորագիրն ուճնցող մեճնադրական ուճուճմնասիրուճյունը: Աղճանք անուճը կրող կոճկասյան երրորդ պատմաճակուճյալիս միավորը միճնչև օրս դիտական արծարծուճմի աուարկա է բացաուպես ոչ աղճանական աղբյուրնեըի ճաղորդաճծ տեղեկուճյուննեըի ճիճման վրա, որոճնց ի մի կարկատուճմը, ցավոճք, գրուճ ճէ փոխարինելու աղճան անճման տակ ներկայցող բնիկնեըի սեփական ճեուճքով կատարվաճծ գրաուճմնեըիս: Ակաղբեմիական իճմաստով միճնչև օրս վիճարկելի է ուճոյնիսկ աղճան ճավաճքական անճման ուճոյնացուճմն այն ճսանվեց ցեղանուճնեըից մեկի ճետ, որոճնք, Մտրաբոճնի տեղեկուճյամբ, կազմուճմ էին այգ երկրի բնակչուճյան ճանգավաճծը և Լեճվական աուուճմով իրար վատ էին ճասկանուճմ:

Աղբարուճյունը պաճանջուճմ է ասել, որ Աղճանքի պատմուճյան, էՄնիկական կազմի, դավանական կացուճյան, եկեղեցական նվիրապետուճյան, դարուճյան ու ճարակից իճնդիրնեըի վերաբերմամբ կայուն ճետաբրբրուճյուն բորբոքողը միճնչադարյան ճայկական աղբյուրնեըն եճ եղել՝ ներաույալ «Աղուանից սլատուճթեան» և «Աղուանից դրի» պաճպանուճյունը: ճուճնական, արաբական, պարսկական ու վրացական մատեճնագրուճյուննեըի մեջ եղաճծ և Աղճանքիս վերաբերող տեղեկուճյուննեըը դիպվաճծայիս եճ, իճիստ ճատակոտոր և այդ սլատճաուճմ միճայն օճանդակ: Իրեըի այս դրուճյունը, բնականաբար, դուճ է բացել բազուճմ եճթարուճյուննեըի ու վարկաճնեըի, կա-

րելի և անկարելի ուճոյնացուճմնեը ու մեկնաբանուճյուննեը աուաղարկելուճ: Աղճանական վիճագիր ուճխարնեըը ուճոյնիսկ ճին թուրքեընեը կարգալու փորճեը եղան, իսկ ուրովճետե բուրը վերծանուճյան աուաղարկնեըը վստաճուճյուն ճնեընչեցիճ՝ մեղանուճմ եղան լուրջ մարդիկ, որոճնք ամեճն աղճանականի մերճման դուճը թճակեցիճ:

Եթե բուճն աղճանադիտուճյան մարզուճմ միճնչև օրս եղաճծ կարևորագուճյն նվաճուճմնեըը թճարկելու Լիճնեք, ապա ճաղաճքական սլատուճյան և պատմական աղխարճադրուճյան բնագավաուճմ պիտի ճիճչատակեճք Վ. Միճորսկուճն և Ս. Երեմայնիս, Լայն ընկալմամբ մշակուճյալիս պատմուճյան մարզուճմ Գ. Վ. Տրևեըիս, իսկ Լեճվի, գրի ու դրչուճյան ճանաչման ճարցեըուճմ՝ Ա. Շանիճեիս: ճարկավ կան նաև ուրիճնեը՝ Ի. Աբուլաճե, Աչ. Աբրաճամայն, Գ. Կլիճմով, Աս. Մնացականյան, Ա. ճակոբյան, Ի. Ալիև և այլք, որոճնք ուճանակալիորեճն նպաստել եճն աղճանագիտուճյան ճանդեպ ճետաբրբրուճյունը ծավալելուճ:

Կարծուճմ եճք, սխալվաճծ ճեճք Լիճնի՝ եթե աղճանագիտուճյան ճամար ելակետայիս ճամարեճք 1937 թ., երբ Մատեճնադրանի N 7117 ճեուագրուճմ, այլ այբուբեճննեըի ճարքուճմ (ճուճնական, վրացական, կոպտական, ճնդկական, արաբական) արճանագրվեց նաև աղճանականը «Աղուանից դիրն է» (էջ 145րճ): Ի. Աբուլաճեիս երեք տասնամակով կարող էր կանխել Լ. Մսերյանցը, երբ իրեճնց ընտանեկան սեփականուճյունը կազմող այդ ճեուագրուճմ, «Աղուանից դրից» երկու թեըթ ճետո ընթերցեց և նամակով ն. Մաուիս ճայտեճց ճայատաու «Յուճնաց սուրբ Աստուաճծ» աղոթքի աուկալուճյունը: Բայց փաստն այն է, որ այդ պատիվը վերապաճճվաճծ էր ճայաբետ-վրա-

ցագետ Ի. Աբուլաճեհին, իսկ վերջինս էլ աշակերտի պատկառանքով գլուտի գիտական գնահատության առաջնություն իրավունքը հանձնեց ուսուցչին՝ ակադ. Ա. Շանիճեհին:

Այբուբենի, ապա նաև Մինգեչաուրի վիմագրի հայտնությունը (1948 թ.) աղվանագիտության նոր շրջան պիտի նշանավորերին՝ եթե այբուբենի տառապատկերների ու տառանունների մեջ աղավաղումներ չլինեին և վստահություն կարելի լիներ վիմագրերի լեզուն համարել ուտիերենը: Ճարակուսանքներն ու ենթադրությունները երկար պիտի շարունակվեին՝ եթե Սինայի թերակղզու Ս. Եկատերինի վանքի հրդեհի տարածքը մաքրելիս 1975 թ. մայիսի 26-ին չբացվեր ձեռագրական անհայտ պահոցը և եթե նորահայտ ձեռագրերից երկուսում (N/Sin 13 և 55) Ձ. Ալեքսիճեհն չնշարար լուսանցքներում պահպանված աղվանից գրերի տառահետքեր:

Վրացական ձեռագրական նորահայտ հավաքածուն խնամելու և ուսումնասիրելու համար 1990-2000 թթ. չորս անգամ այս մայրավանք այցելած Ձ. Ալեքսիճեհն վրացագետ-հայագետի պատրաստության բերումով լիովին պատկերացնում էր գլուտի կշիռն ու ընդգրկումը, ուստի 1991 թ. սկսած մեկ տասնյակից ավելի նախնական հաղորդումներ ու հրատարակումներ է կատարել այլևայլ լեզուներով և բազմաթիվ գեկուցումներով այս ու այն միջազգային համաժողովներում տեղյակ պահել իր պրպտումների ընթացքին:

Կատարված աշխատանքի առավել ամբողջական պատկերը ներկայացված է սույն գրախոսվող գրքում: Ի միջի այլոց նկատենք, որ տողերիս հեղինակը հետևել է հրատարակումների ընթացքին և արձագանքել առաջարկվող մեկնաբանություններին («Գրական թերթ», 1991, 24 մայիսի):

Գրքի առաջին գլուխը վերաբերում է անելիքը սահմանելուն և վերծանության նախապատմությանը՝ Ս. Եկատերինի վանքը, վրացիները Սինայի լեռան վրա, Սինայի լեռան վրացական հնությունների ուսումնասիրությունը, Սինայի լեռան նոր հավաքածուի հայտնվելը և վրաց-աղվանական կրկնագրի գլուտը (էջ 12-25): Կատարվող կա-

րևոր ամփոփումների թվում հիշատակելի են. Սինայի վրաց միաբանությունը, թերևս, կապ է ունեցել Աթոսի լեռան վրացի գործիչների հետ, N/Sin-67 ձեռագրում ներկայացված են սինայցի հայերի խրատներ ու հրաշագործություններ, ուր նոր անուն է Ս. հայր Սամուել Վրացին: X դ. երկու ձեռագրերից մեկը՝ N/Sin - 48, բովանդակում է «Վրաց դարձի» երկամսյա պատմության ընդարձակ հատված: Նոր խմբագրությունը (նաև ձեռ. N/Sin - 50) բավականաչափ տարբեր է մինչ այդ հայտնի կրկին խմբագրություններից, որով X դարում արդեն վրաց այդ հնագույն պատմագրական երկի չորս տարբերակ է գոյություն ունեցել, ինչը, ըստ հետազոտողի, բացառում է հուշարձանի ստեղծման թվագրումը IX դարով (տողերիս հեղինակը շարունակում է պաշտպանել Կ. Կեկելիճեի տեսակետը): Հիշատակված երկրորդ ձեռագրում ներկայացված են նաև ասորի հայերի վարքերի նոր խմբագրություններ: Վրաց նոր հավաքածուի N 2 ձեռագրում առկա է Կիրակոս Միջնածորեցու նվիրած 45 գրքերի ցանկը:

Նոր լույս աշխարհ եկած կրկնագիր ձեռագրերից երկուսը գրչության ստորին (նախնական) շերտում հայերեն բնագիր են ունեցել: Հավաքածուի N/Sin - 13, 55) ձեռագրերում երևան են եկել վրաց-աղվանական կրկնագրեր (հրդեհի պատճառով դրանք քարացած զանգված են ներկայացրել):

Երկրորդ գլուխը նվիրված է Կովկասյան Աղվանքի ներկայացմանը (էջ 26-32), հետևյալ ենթախորագրերով. հայկական աղվանագիտություն, այսպես կոչված «նոր հայացք», ագրեթանցի գիտնականների կարծիքը: Մինչև 60-ական թվականները մեզանում եղած աղվանագիտական հայացքները Ձ. Ալեքսիճեհն համարում է «բավականաչափ ուղիղ» (էջ 27), ըստ որի 552 թվականից հաստատվեց նվիրապետուն հայոց եկեղեցուց կախում ունեցող աղվանական կաթողիկոսություն: VII դ. սկզբներից աղվանից եկեղեցին, վրացականի հետ միասին, քաղկեդոնական գավառների հարեց, իսկ VIII դ. արաբական տիրապետության հաստատման հետևանքով առհավետ վերադարձավ միաբնակություն: V

դ. 10-ական թվականներին թարգմանիչ Բենիամինի օժանդակությամբ Մաշտոցն ստեղծեց աղվանից այբուբենը: 60-ականներից հետո մեզանում ձևավորված նոր Հայացքի Հիմնական էությունը, ըստ Ալեքսիձեի, հետևյալն է:

ա) Աղվանից պետությունը կազմավորվել է միայն մ. թ. ա. I դ. սկզբին, որի հարավային սահմանը Կուրն է:

բ) Աղվանական ցեղերի կոնսոլիդացիա տեղի չի ունեցել:

գ) 462 թ. լուծարվեց Աղվանից պետությունը և ստեղծվեց Աղվանք անունով մարզպանություն, որի մեջ մտան Ուտիքն ու Արցախը (387 թվականով ևս թվադրում են) և ընտելացան այդ նոր անվանը, որը քաղաքական իմաստով է և ոչ էթնիկական: Աստիճանաբար մշակվեց «աղվանական աշխարհայացք» պահպանելով Հայկական ինքնադիտակցությունը:

դ) Պարսիկ Արշակունիները Հայացան: Եկեղեցու և երկրի լեզուն Հայերենն էր («ինչպես Քարթլիում» փակագծում ավելացնում է հեղինակը):

ե) Բուն աղվանները իրենց դպրությունը չկարողացան ստեղծել և շուտով ձուլվեցին այլ ժողովուրդների մեջ:

զ) Հայկական աղբյուրների Հիշատակած աղվանական դպրությունը Ուտիք-Արցախ-Պարթևանի բնակիչների համար ստեղծված Հայալեզու դպրություն է:

Այս ամենը, փաստորեն, «Armenica»-ում Հ. Անասյանի հրատարակած հոդվածի վերաշարադրանքն է: Նորն այն է, որ Զ. Ալեքսիձեի առանձնացնում է «չափավոր դիրքորոշում» ունեցող Հայագետների խումբ, որոնք ընդունում են աղվանական դպրության դոյությունը V-VII դդ. շրջանակում: Ըստ նրանց՝ աղվանական գրչությունն ու դպրությունը չկարողացան գտնել անհրաժեշտ դործառնություն, քանի որ պետական և եկեղեցու լեզուն Հայերենն էր: Այստեղ Զ. Ալեքսիձեի մեղանչում է իրողության հանդեպ և Հայտարարում, թե այս խմբի Հայ գիտնականները մինչև VII դ. եկեղեցական բաժանումը վրաց եկեղեցու պաշտոնական լեզուն ևս Հայերենն են համարում: Սա կատարյալ հորինվածք է: Պետք է ճիշտ հասկանալ Primus inter pares

կարգավիճակը, որը նաև լեզվին է վերաբերում:

Աղբյուրների մասնագետների մոտեցումը Ալեքսիձեի համարում է Հայոց «նոր Հայացքի» չափազանցված զգայական արձագանք: Ըստ նրանց, VIII-X դդ. արաբ զավթիչներն ու Հայոց եկեղեցին ոչնչացնում են աղվանական դպրության հուշարձանները, իսկ մինչ այդ աղվանից պատմության երկերն ու եկեղեցու կանոնները թարգմանում են Հայերենի: X-XIII դդ. Կուրի աշահյանյակից սերող Հայալեզու բոլոր նշանավոր գործիչները (Գոշ, Գանձակեցի և այլք) պիտի համարվեն Հայալեզու աղվան գրողներ: Ըստ Զ. Ալեքսիձեի, այս աստիճան հակադիր Հայացքները խոչընդոտում են, բայց և մի տեսակ սատարում աղվանագիտության առաջընթացը: Բոլոր պարագաներում աղվանագիտությունը այլևս հինը չէ:

Երրորդ գլուխ. Տեղեկություններ աղվանական գրչության և դպրության մասին (էջ 33-54): Վկայակոչում է Կորյունի երկի («նշանակալիորեն կերպարանափոխված»), Մովսես Կաղանկատվացու, Ղևոնդի, «Գիրք թղթոցի» տեղեկությունները, ապա անցնում Հայերեն ձեռագրում այբուբենի Հայտնաբերմանը, վիճաբերի Հայտնությունը: Մանթ չլինելով Մատենադարանի N 7117 ձեռագրի Լ. Խաչիկյանի քննությունը, Զ. Ալեքսիձեի կրկնում է այբուբենի նախագաղափարը Ղրիմից բերելու դրույթը: Նշում է այբուբենում տառապատկերների և դրանց Հնչական արժեքների աղավաղման առկայությունը, եղած աղվանական նմուշների ընձեռած հնարավորության սահմանափակությունը, ուտիքներով կարգավորվածության պակասը և այլ պարագաներ: Այնուհետև թվարկում է աղվանական վիճաբերը, բերում եղած վերծանության փորձերը (Ա. Աբրահամյան, Գ. Կլիմով, Ս. Մուրավյով, Վ. Շուլց): Զ. Ալեքսիձեի առանձին ենթավերնագրով անդրադառնում է Գաղստանի Վերին Լաբկո դյուղում գտնված աղվանական այբուբեն կրող սալիկին և Ս. Մուրավյովի հետևողությամբ կեղծիք համարում այն:

Գլուխ չորրորդ. Սինյի կրկնագրերը: Հեղինակը VII դ. սկզբից մի քանի տասնամ-

յակ առաջ է տանում վրաց և աղվանից եկեղեցիների քաղկեդոնական կողմնորոշումը, նրան նախորդած Համարելով Ջենոն կայսեր Հենտոիկոնը, բուն բաժանումը գնում VII դ. սկզբին: Ըստ Հեղինակի՝ VII-VIII դդ. Այսրկովկասի դավանական միասնությունն ապահովողը մոնոթեիստականությունն է: Մանաղկերտի ժողովով Հայոց եկեղեցին դարձյալ միաբնակություն է վերադառնում: Արաբների օժանդակությամբ Աղվանից եկեղեցին ևս միաբնակ դավանություն է դառնում: «Աղվանքի ողբերգությունն այն է, - դրում է Հեղինակը, - որ նա չկարողացավ գտնել վրացիներից ու Հայերից տարբերվող դավանություն՝ իբրև իր գաղափարական դիրքորոշում» (էջ 57): Նա աղվանական դպրության աղատ զարգացման շրջան է համարում VI-VII դդ., երբ Հենտոիկոնն էր գործում և ապա՝ վրաց եկեղեցու Հետ Հակադրում էր Հայկականին: Այնուհետև ընկնում է Հայոց եկեղեցու գործող աղբյուրության տակ, որը (Հայոց եկեղեցին) ոչնչացնում է նրանց քաղկեդոնական համարվող գրականությունը: Միաբնակ Աղվանքը անցնում է Հայոց լեզվի ու գրչության և «այսպես կոչում»: Ուստի, աղվանական պատառիկների պահպանում ակնկալելի է քաղկեդոնական աշխարհում, մասնավորապես Վրաստանում: Վրաց ձեռագրերի կազմում աղվանից գրչության նմուշների պահպանումը Ջ. Ալեքսիճեն համարում է վերջին 20-25 տարիների վրացական միջավայրում առաջ քաղված գրույթների հաստատում (նկատի ունի, հավանաբար, մեզանում առարկություններ հարուցող իր գրույթները): Երուսաղեմում աղվանական սրբաբանների առատությունը (ըստ Դասխուրանցու) հակված է առնչել եղիշայի այնտեղից լինելուն և համոզված է, որ այդ վանքերը VI-VII դդ. քաղկեդոնական պիտի լինեին (ապացույցներ չկան):

Ջ. Ալեքսիճեն աղվանական ձեռագրի Սինա հասնելը կապում է Աղվանքի միաբնակության դառնալու հետ, ձեռագիրն ընկնում է Վերջ կամ Պաղեստին, հետագայում կորցնում է իր աղվան գործածողը, ուստի X դ. մասնատվում և նոր կիրառություն գտնում: Հնարավոր վարկած է՝ եթե

Հիմք ունենայինք աղվաններին տեքստը իսկապես քաղկեդոնական նկատելի:

Մեզ հասած երկու կրկնագրի թերթերի քանակը 170-ի է հասնում, 12 հատակոտորով: Ամեն քայլափոխին N 7117 ձեռագրի պահպանած տառապատկերներին ու դրանց հնչյունական արժեքին դիմելով Հանդերձ, Հեղինակը հայտարարում է, թե «1937 թ. հայտնաբերված այբուբենը բանալու դեր չի կատարում» (էջ 60): Աղվաններն ձեռագրի նախնական դնահատուկության հետո (երկայուն, լայն լուսանցներ, տողագծում, սյունակում 22-24 տող, թերթատման թույլ հետքեր, խնամքով գրչություն և այլն), եզրակացնում է. «Աղվանքը տնտեսապես լավ զարգացած և բավական հարուստ երկիր էր (ձեռագրի պատրաստումը շատ թանկ էր նստում)»: Աղվանական գրչությունը ևս ձախից աջ է (ինչպես Հայերենն ու վրացերենը), որի ապացույցը տողասկզբում ձախից գլխադիր ունենալն ու հապավման նշանների ձախից աջ ուղղվածությունն է: Այդ է վկայում և Հայերենի, հունարենի և վրացերենի նմանողությամբ ՈՒ-ի կառուցվածքը: Ի վերջո, սյունակի ձախ եզրը միշտ մեկ գծի վրա է (Ն. Ռգաև անունով մեկը 1964 թ. աղվանական արձանագրությունը թուրքերեն էր կարդում աջից ձախ գրչությամբ): Աղվաններն գրչագրի տառանշանների ոճը հիշեցնում է Հայերեն, եթովպերեն և վրացերեն գրաոճերը, հատկապես վերջինս: Ձեռագրում կարելի է տարբերակել երկու (գուցե և երեք) գրչություն:

Անցնելով վերծանության ընթացքի նկարագրությանը՝ Ջ. Ալեքսիճեն բերում է այլևայլ նկատառումներ, որոնք մղում են աղվաններն ձեռագրում արարողական գրքի՝ Ճաշոցի որոնման, որի մեջ շատ են սուրբգրական դրվագները, շուտ են հնանում, լուսանցներում մեկնաբանություններ են ունենում: Վրացական և Հայկական ճաշոցների կազմության նկատառումը հեղինակին հուշել է, որ համեմատաբար մանր գրերով առանձնացողները ընթերցումներին խորագրեր են: Քառասուն այդպիսի խորագրերի մեջ «պահպանված այբուբենի օգնությամբ» նա կարդում է Թեասալոնիկե [] տեղանունը, որն արդեն հուշում է, թե խոս-

քը Պողոս առաքյալի «Առ Թեսալոնիկացիս» թղթի մասին է: Նյութն այլևս ճանաչելի է դառնում, և Հատուկ անունների օգնությամբ ստուգումներ ու վերականգնումներ կատարելով՝ Հայերեն ձեռագրի ընձեռած այբուբենի 52 գրերից գրապատկերի նույնությամբ ճշտվում է 42 գրանշան, 10 գրանշան այբուբենում և կրկնագրում իրար չեն ծածկում, սակայն Հնչյունական առումով 36 գրի ճշգրտությունը անվերապահ է:

Նորկտակարանային գրվագների ճանաչումը հեղինակին հնարավորություն է տալիս, Հատուկ անուններից բացի, կուսակցական հայերենի և վրացերենի հետ ընդհանուր գործածություն ունեցող բառեր (ԱՐԱՋԱԿ - աւագակ, ՀԵԹԱՆՈՍ - հեթանոս, ՔԱԼԱՔ - քաղաք): № 7117 ձեռագրում զ գրի բացակայությունը և նրա փոխարեն 37-րդ տեղն զբաղեցնող «խամ»-ը ապացույց է համարում, որ ձեռագրի աղվանից այբուբենի դարձված օրինակը կատարված է եղել մինչև IX դ., երբ Հայերենը դեռ լիք խիստ չի տարբերակվել: Մի խումբ բառերի իմաստն էլ ճշտվում է ժամանակակից ուտիբենում զրանց ներկայությամբ (բուս - ին - սով, ղի - օր, շու - դիշեր և այլն): Այս ճանապարհով Ջ. Ալեքսիսին մեկ առ մեկ բերում է Հայերեն ձեռագրի այբուբենի տառերը, թվարկում զրանց նշանակության վերաբերյալ եղած կարծիքները և իր վերծանած տեքստերից վկայակոչում կատարելով սահմանում յուրաքանչյուրի Հնչյունական արժեքը (էջ 85-105): Այնուհետև կազմում է Հայերեն ձեռագրի այբուբենի և կրկնագրի գրերի Համեմատական աղյուսակ: Պարզելիք է մնում Հայերեն ձեռագրի 6 տառանշանի Համեմատելիները: Գրուխն ավարտվում է աղվանական և եթովպական գրչությունների (էջ 110), աղվանական և վրացական գրերի (էջ 111-112) և աղվանական ու Հայկական գրերի (էջ 113) Համեմատական աղյուսակների հրատարակումով: Նկատի են առնվել տառապատկերները և ոչ հնչյունական արժեքը: Ըստ հեղինակի՝ եթովպականի հետ նույնապատկեր է 14 միավոր, վրացերենի հետ՝ 19 գիր, Հայերենի հետ՝ 10 տառապատկեր: Սպասելի էր, որ հեղինակը կկազմեր նաև Հայկական և վրացական այբուբենների այն տառանիշերի աղյուսակը, որոնք նույնական կամ ազգակից են միմյանց ու նաև աղվանականի՝ թե՛ տառապատկերով և թե՛ հնչական արժեքով: Այս պարագայում կունենայինք՝

Աղվանական - վրացական 5. նույնություն (Յ(հ), Ո (ելուստի բարձրացմամբ՝ Թ), Ի (Վ), Ք, ՈՒ):

Աղվանական - Հայկական 3 նույնություն (Փ, Ք, Ն):

Հայկական - վրացական տառապատկերի ընդհանրություն - 10 միավոր (Դ (Վ), Ժ (Ձ), Կ (կ), Ղ (Գ), Ն (Պ), Ո (Ղ), Տ (Ճ), Ի (Է), Փ (փ), Ք (Մ, Ք):

Աղվանական և Հայկական գրերի Համեմատության աղյուսակի մեկնաբանության մեջ Ջ. Ալեքսիսին նշում է, որ Հայերենի հետ հարաբերելիս մի քանի բացառություն (=ներողամտություն) է արել: Անշուշտ՝ վատ էր լինի, եթե նույնքան գիշողությամբ կազմեր Հայկական և վրացական նույնանիշ գրերի Համեմատության աղյուսակ, մոտավորապես այսպես.

Հայ. Գ Է Կ Ն Ս Վ Ի Փ Ք
 Վրաց. Ղ Ի Կ Ե Ն Դ Վ Փ Ի
 Ապա և Համեմատության առներ աղվանականի և վրացականի նույնանիշ գրերը՝
 Աղվ. Դ(ք) Ա(ո) Դ(ո) Կ(ո) Ի(ո) Ի(ո)
 Վրաց. Դ(ո) Ա(ո) Դ(ո) Կ(ո) Ի(ո) Ի(ո)

և օգտվելով «եթե երկու մեծությունների զատ-զատ Հավասար են մի երրորդի, ապա նրանք Հավասար են» օրենքից՝ ասել, թե Այսրկովկասի երեք դպրությունների այբուբենները ստեղծվել են միևնույն ժամանակ, մշակութային նույնական միջավայրում, նույն անհրաժեշտությամբ ու նույն հնչյունական - դրապատկերման սկզբունքով, ջանալով որքան կարելի է քիչ կրկնել միմյանց, և այնուամենայնիվ՝ նույն օրորոցի ծնունդ լինելն անգին աչքով դիտելի է: Ջ. Ալեքսիսին բոլոր հիմքերն ու իրավունքներն ունի այս վերծանության պատեհությամբ Հաղթահարելու դարավոր կաշկանդվածությունը (հիշենք Վարդանի խոսքը Վարժիո խաչի մասին) և ընդունելու Մաշտոցի, Ջաղալի («այր գրագետ և ճշմարտահաստ»), Բենիամին երեցի և

նրանց գործը քաջալերող վրաց Բակուր արքայի, Մովսես եպիսկոպոսի, Աղվանից թագավոր Արսվազի, Երեմիա եպիսկոպոսի պատմականությունը, ուրեմն և Կորյունի Հաղորդման պատմականությունը: Սակայն նա զգուշացել է իր արդյունավոր աշխատանքից մակաբերվող եզրակացությունը բարձրաձայնել:

Գլուխ հինգերորդ: Աղվանական «Ճաշոցը»: Կրկնագրի «Ճաշոց» լինելու կուսումը դուռ է բացել երկրեզու - եռալեզու տեքստ ունենալու համար, որից հետո ընթացքն այլևս պարզ է: «Ճաշոցի» առկայությունը նաև ապացույց է, թե ս. Գրքը, հիրավի, թարգմանված է եղել աղվաներեն, և քանի որ «Ճաշոցի» որոշ ընթերցումներ (օրինակ՝ Բ Կորնթ. 11,23-27, Ա Թես., 2,5-8) հայերենում կամ վրացերենում (ճաշոցներում) զուգահեռություն չունեն, Հեղինակը եզրակացնում է, թե այն թարգմանական չէ և կազմված է ըստ այսօր կրած հունական օրինակի: «Ճաշոցը» պարզունակ է և ընդգրկում է տերունական տոներ, ավելի պարզունակ, քան 438 թվականով թվագրվող Հայկական օրինակը, ուրեմն և նախորդում է նրան: Չ. Ալեքսիձենն այն թվագրում է IV-V դդ. սահմանագլխով, բնականաբար, ս. Գրքի թարգմանությունը այդ սահմանագծից առաջ պիտի լիներ (միտքը այբուբենի՝ չորրորդ դար հասցնելն է): Յուզանան (իմա Յուզաննէս) անձնանունն ու «Կորթա» (մատաղ, ընծա, «դուրբան») տերմինը Հեղինակին թույլ են տալիս մտածելու, որ աղվանական «Ճաշոցը» ստեղծված պիտի լինի երուսաղեմյան միջավայրում, պատկանելով երուսաղեմյան ճաշոցների ամենավաղ տիպին: Նրանում եղած նորկտակարանային որոշ ընթերցումներ կարող են օգտակար լինել ս. Գրքի բնագրի վաղ խմբագրություններն ուսումնասիրելիս:

Գլուխ վեցերորդ: Աղվանական «Ճաշոցի» լեզուն: Ենթադրություններն այլևս ավարտված են՝ ուտիներենը նոր աղվաներենն է: Ուտիներենը կովկասյան լեզուների լեզգիական խմբին է պատկանում, նրա հարավային ճյուղին: «Ճաշոցի» բառագանձը հնարավորություն չի տալիս որոշելու սերունդը (կան այլևայլ ընդհանրությունների հետքեր): Այնուհետև բերվում են հասպա-

վումները (էջ 128-129), գրերով արտահայտված թվականները:

Հաջորդ գլխում (VII) բերվում են «Ճաշոցի» ընթերցանելիքների խորագրերը՝ աղվաներեն, վրացերեն գրադարձությամբ ու վրացերեն համապատասխանությամբ (40-ից 11-ը), ապա և ճանաչված ու ընթերցված ընթերցանելիքներից նմուշներ (Բ Կորնթ. 11²³⁻²⁷ Եփես. 5²⁵⁻²⁸ Ա Կորնթ. 12²⁸⁻²⁹ Գործք ԺԲ₁₋₂ Եբր. ԺԱ₁₇₋₁₉ Մատթ. Ժէ₁₋₅ Եբր. Գ₁₋₉)՝ աղվանագիր և հին վրացերեն համապատասխանությամբ: Կարելի է սահմաններում Չ. Ալեքսիձենն անդրադարձել է աղվաներեն լեզվի քերականությանը՝ հնչյունաբանությունը, ձևաբանությանը, խոսքի մասերին (էջ 151-153), բառագանձի եկեղեցական տերմիններից հայերենի կնիք են կրում սալմոս, քահանայ, աբազան, թարգման, վարձապետ, հեթանոս, կորբա (կորպան), տալաար: Սակայն զարմանք է հարուցում Հայ. մարմին բառի ներկայությունը աղվաներենում (կարծում ենք՝ սանսկրիտի marman-ը, որ բերում է Հեղինակը, կարող է սոսկ ստուգաբանական հետաքրքրություն ներկայացնել): Անձնանունների գրադարձություն մեջ, հայերենի նմանողությամբ, պահպանվում է հունարենի - օժ վերջավորությունը, ուշագրավ է նաև Յակոբ գրությունը: Ինքնատիպ է այոյա (ալէլուիա) և մարդավեն (մարգարէ) տերմինների կրած հնչյունափոխությունը աղվաներենում:

Ի վերջո, հայագետ Հեղինակը, հասկանալի է, անուշադրության չէր մատնի N/Sin-13 և 55 ձեռագրերի ստորին շերտերում եղած հայերեն բնագրերը, որ քաղված են երեք ձեռագրերից: Դրանցից մեկ թիվը Հեղինակի ճշտմամբ հատված է Եվթաղ Աղեքսանդրացու ներածության, որ կցված է Պողոս առաքյալի թղթին: Չ. Ալեքսիձենն հաջողությամբ այն վերծանել է, համեմատել Ա. Վարդանյանի գիտական հրատարակության հետ և գուրս գրել առկա տարրընթերցումները (էջ 163):

Մեկ էջանոց վերջաբանում (էջ 167) աշխատասիրողը թվարկում է սպագա անելիքները, որոնց թվում է աղվանական այբուբենի գրչական համակարգի ճշգրտումը և ապա միայն նրա ծագման խնդրի քննարկումը:

Գրքի վերջում ծանոթագրություններին ու ցանկերին հաջորդում է ուսումնասիրության թեմային առնչվող գրականության մատենագիտություն (էջ 202-216):

Ա. Շանիձեի "Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки" (1938 թ.), Կ. Տրևերի "Очерки по истории и культуре Кавказской Албании" (IV в. до н. э. — VII в. н. э.) (1959 թ.) և Ս. Երեմյանի "Идеология и культура народов Албании III — VII вв.", "Политическая история Албании в III-IX вв." (1958 թ.) աշխատություններով սկիզբ առած ակադեմիական աղվանագիտությունը Ջ. Ալեքսիձեի սույն բարեպատեհ, ամենայն քաջալերանքի ու գնահատության արժանի գրքի հրատարակությամբ ավարտում է իր կազմավորման շրջանը: Այբուբենի առեղծվածն այլևս լուծված է, կլուծվե՞ն արդյոք Աղվանքի էթնիկական, քաղաքական, մատե-

նագրական ու մշակութային պատմության բուն առեղծվածները այբուբենն ունենալու պարագայում ցույց կտա գիտության այդ բնագավառի ապագա սպասավորների պատրաստության, բարեխղճության ու հմտության աստիճանը:

Աղվանական այբուբենի ճանաչումը լիովին հաստատեց ալադ. Ա. Շանիձեի ոչ առանց ոգևորության կատարած ամփոփումը, թե «Անկասկած է այն, որ Հայոց այբուբենը խելամտորեն կազմած այբուբեն է: Նրանում յուրաքանչյուր գիր ունի իր նշանը և յուրաքանչյուր նշանի իր գիրն է համապատասխանում (բացի ՈՒ-ից, որին երկու նշան է պետք): Այս սկզբունքը վրաց ու աղվանից գրչությունների մեջ էլ է կիրառված: Այս ամենը ցույց է տալիս, որ Այսրկովկասի երեք մշակութավոր ժողովուրդների այբուբենները միանման սկզբունքի վրա են կառուցված»:

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ